



**ՆԱՅԱՍԱԿԱՆ ԿԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՎԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

13 փետրվարի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի
Մ. Թովուզյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Էվելինա Արաբյանի անհատական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն քաղաքացի Էվելինա Արաբյանը 29.01.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ Սահմանադրության 3, 18 եւ 19, 8, 31, 43, 45, 83.5-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156, 158, 159, 160-րդ հոդվածների դրույթներն այնքանով, որքանով չեն ապահովում կողմերի հավասարության իրավունքը, հայցվորի լաված լինելու իրավունքը, սեփականության իրավունքից բացառապես դատական կարգով զրկելու իրավունքը»:

Է. Արաբյանը ներկայացրել է նաեւ միջնորդություն՝ պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթներում առկա իրավական բացի արդյունքում վարչական մարմնի համար ստեղծվում է դատավարական ընթացակարգի արտոնյալ հնարավորություն, որը խոչընդոտում է անձի՝ սահմանադրաիրավական եւ հանրային ընդհանուր շահից բխող արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրականացման սկզբունքին:

Դատական կազմը հիմնվելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրության վրա եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով, գտնում է, որ սույն գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

1. Դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156 եւ 160-րդ հոդվածները դիմողի նկատմամբ չեն կիրառվել**, մինչդեռ ՀՀ Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով անհատական դիմումին ներկայացվող պահանջներից մեկն էլ դիմողի կողմից վիճարկվող դրույթի՝ նրա նկատմամբ կիրառման փաստի առկայությունն է:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 որոշմամբ արտահայտած դիրքորոշման համաձայն՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության կողմ հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը: ՀՀ սահմանադրական դատարանի նշված՝ 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 որոշումը միաժամանակ նախատեսում է, որ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղաքացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաեւ քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի եւ համապատասխանաբար՝ նշված վեճերի եւ քրեական մեղադրանքի հարցի լուծման իրավագործությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցներն սպառելու արդյունքում: Այս համատեքստում, ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման մեջ ձեւակերպված իրավական դիրքորոշման համաձայն՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Վերոնշյալը հիմք ընդունելով՝ դատական կազմը գտնում է, որ առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմք:

2. **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158 եւ 159-րդ հոդվածների վերաբերյալ** դատական կազմը գտնում է, որ այդ հոդվածներով նախատեսված իրավադրույթների մասով դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ դրանց հնարավոր հակասահմանադրականությունը դիմողը փորձում է հիմնավորել ենթադրյալ օրենսդրական բացի վկայակոչմամբ: Դատական կազմն ընդգծում է, որ օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի տարատեսակ, իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի

5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ, անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը, նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը **խախտում է կամ կարող է խախտել** կոնկրետ սահմանադրական իրավունք: Ջարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Այսպիսով, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, երբ կոնկրետ գործով միաժամանակ առկա են օրենսդրական բացի՝ սահմանադրական դատարանի կողմից մատնանշված վերոնշյալ չափանիշները, այն է՝ կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտում կամ այդ խախտման պոտենցիալ հնարավորություն եւ օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքների բացակայություն կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված հակասական իրավակիրառական պրակտիկա:

Խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողի առաջ քաշած փաստարկներն այն մասին, որ վիճարկվող հոդվածներում առկա իրավական բացով օրենսդիրը վարչական մարմնի համար ստեղծել է դատավարական արտոնյալ ընթացակարգ, որի պայմաններում իմաստագրվում է ՀՀ Սահմանադրության 18, 19, 8, 31-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքը, խոչընդոտներ են ստեղծվում դրանց իրացման համար, ակնհայտ անհիմն են, քանի որ օրենսդիրը պատասխանողի համար իրավական հնարավորություններ սահմանել էր: Խոսքը մասնավորապես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի /ընդունված 2007 թվականի նոյեմբերի 28-ին/ 158-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման մասին է: Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որը ինքը վարչական դատավարությանը պետք է ներգրավվեր հենց սկզբից, այն է՝ վճարման կարգադրություն արձակելու դիմումի՝ վարչական դատարանի կողմից քննության ընդունման պահից, ակնհայտ անհիմն է, սահմանադրաիրավական վեճ չի պարունակում, հետեւաբար՝ օրենսդրական բացի լույսի ներքո չի կարող քննարկվել:

3. Դատական կազմը հարկ է համարում նաև նշել, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթներն ամրագրված էին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, որն ընդունվել էր 28.11.2007 թվականին եւ իր ուժը կորցրել է 05.12.2013թ. ՀՕ-139-Ն օրենքով: Նոր վարչական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից: Վերջինիս «Անցումային դրույթներ» վերտառությամբ 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո վճարման կարգադրություններ արձակելու պահանջով հայցադիմումներ վարչական դատարան չեն կարող ներկայացվել»:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Էվելինա Արաբյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող

Անդամներ

13 փետրվարի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/1-4